ՀՀ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

ՈՐՈՇՈՒՄ

ՀԱՅՑԱԴԻՄՈՒՄԸ ՎԱՐՈՒՅԹ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

2024 թվականի հունվարի <<18>>-ին (ք. Երևան)

Ծանոթանալով «Թեոֆարմա Իմպորտ» ՍՊ ընկերության (պետական *գրանցման համարը՝ 278.110.934511,իրավաբանական հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Դավիթ Բեկի 1 թաղ., 5 փող, ծանուցման և գործունեության հասցե՝ ՀՀ, Արմավիրի մարզ, Փարաքար համայնք, Թաիրով գյուղ, Դեմիրճյան թղմ. 1–ին փող., 22/1, էլ. փոստ՝ tender@theopharma.am, info@theopharma.am, այսուհետ նաև՝ Հայցվոր)* ընդդեմ ՀՀ Պաշտպանության նախարարության *(գտնվելու վայրի հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Բագրևանդի 5, էլ. փոստ՝ l.tazayan@mil.am, այսուհետ նաև՝ Պատասխանող)՝* ՀՀ ՊՆ ԳՀԱՊՁԲ–23-9/56 ծածկագրով ընթացակարգի շրջանակում « Թեոֆարմա Իմպորտ» Սպ ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին ՀՀ պաշտպանության նախարարության՝ պատվիրատուի ղեկավարի 11.12.2023 թվականի N95 որոշումը անվավեր ճանաչելու պահանջի մասին հայցադիմումին,

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

Հայցվոր «Թեոֆարմա Իմպորտ» ՍՊ ընկերության տնօրենը հայցադիմում է ներկայացրել դատարան ընդդեմ պատասխանող ՀՀ Պաշտպանության նախարարության ՝ ՀՀ ՊՆ ԳՀԱՊՁԲ–23-9/56 ծածկագրով ընթացակարգի շրջանակում « Թեոֆարմա Իմպորտ» Սպ ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին ՀՀ պաշտպանության նախարարության՝ պատվիրատուի ղեկավարի 11.12.2023 թվականի N95 որոշումը անվավեր ճանաչելու պահանջի մասին :

Հայցադիմումը և դրան կից ներկայացված փաստաթղթերը դատավորի աշխատակազմին են հանձնվել 15.01.2024 թվականին:

Հայցվորի ներկայացուցչի կողմից պահպանվել են հայցադիմումի ձևին, բովանդակությանը և կցվող փաստաթղթերին ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 121-րդ, 122-րդ հոդվածներով առաջադրվող պահանջները:

Հայցադիմումի ընդունումը մերժելու կամ այն վերադարձնելու հիմքեր չկան:

Ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 125-րդ, 234.5-րդ հոդվածի 2-րդ, 234.9-րդ հոդվածի 1-ին և 4-րդ, 199-րդ և 200-րդ հոդվածների պահանջներով,

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. Հայցադիմումն ընդունել վարույթ:
2. Որոշումը սահմանված կարգով ուղարկել գործին մասնակցող անձանց և <<Գնումների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված լիազորված մարմնի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեին:
3. Թիվ ԵԴ2/0138/02/24 քաղաքացիական գործով եզրափակիչ դատական ակտը հրապարակել ՀՀ դատական իշխանության պաշտոնական կայքում՝ 2024 թվականի փետրվարի 06-ին:
4. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից և ենթակա չէ բողոքարկման:

ԴԱՏԱՎՈՐ **Ա. ԱԹԱՆԵՍՅԱՆ**

Digitally signed by ATANESYAN ANI 5101901431